



Հայոց պատմության անորոշ հարցերից մեկը Արարատյան թագավորության վերջին տարիների ժամանակագրությունն է:

Հայտնի է, որ Ռուշա Բ-ից, այսինքն՝ Ք.ձ.ա. 640-ական թվականներից հետո թագավորել են հինգ արքաներ՝ Սարգուրի Գ, Սարգուրի Գ, Էրիմենա, Ռուշա Գ, Ռուշա Դ: Սակայն նրանց գահակալման տարիներն անհայտ են: Մինչև վերջերս որպեսզիստորության մեջ բավական արմատավորված էր այն կարծիքը, որ Արարատյան թագավորությունը կործանվել է մինչև մարտ-լիդիական պատերազմի սկիզբը, այսինքն՝ մոտ 590 թվականին, քանի որ բարեկեցյան աղբյուրների և Երեմիայի գրքի տվյալներից կարելի է եզրակացնել, որ 609 թ. հետո Վան-Արարատը արդեն պիտի որ գտնվեր Մարաստանի ազդեցության տակ, իսկ զմուտ կողմից՝ դժվար թե Մարաստանը 590-585 թթ. պատերազմներ Լիդիայի հետ՝ թիկունքում ունենալով չճանաչված Արարատյան պետությունը: Այսպիսով, այդ թագավորների գահակալման մեջին տևողությունը մոտ 11 տարի է, որն անբավարար է, եթե հաշվի առնենք, որ նրանցից յուրաքանչյուրը նախորդի որդից է (դա անատույզ է միայն Էրիմենայի դեպքում): Այս թիվը խիստ տարբերվում է նախորդ հինգ թագավորների և բոլոր նախորդների գահակալման միջին տևողությունից՝ մոտ 28 և 21,5 տարի համապատասխանաբար: Սակայն նույն Երեմիայի հայտնի կոչից (այն վկայարկելու է նաև Խորենացին), որով Արարատի, Մինցնիի և Աքսեանզի թագավորություններին Մարաստանի թագավորներին հետ մեկտեղ հորդորում է պատերազմել Բաբելոնի դեմ, կարելի է եզրակացնել (Մ. Կառավայան, Ռ. Իշխանյան, Գ. Սարկիսյան), որ Ք.ձ.ա. 6-րդ դարի սկզբին Արարատյան թագավորությունը դեռ ուներ բավական մեծ հեղինակություն ու հորդոր-

յուն, և Մարաստանի կողմից նրա նվաճման կամ կործանման մասին ենթադրությունները հիմնավորված չեն:

Խորենացին նույնպես ոչինչ չի հայտնում Հայքի նվաճման մասին. ընդհակառակը, այդ ժամանակահատվածում նա հիշատակում է երեք արքաների՝ Սկայարդուն, Պարտիլին և Հրաշային:

Այսպիսով, եթե ընդունենք, որ 590 թվին Արարատյան թագավորությունը չի կործանվել, այլ շարունակել է զոյառնել որպես համեմատաբար անկախ պետություն (թեև ուղևոր և Մարաստանի ազդեցության դուրսում) մինչև 6-րդ դարի 60-ական թվականները՝ Երվանդ Ա Սակավայացիի և Տիգրան Երվանդյանի գահակալման տարիները, ապա թվարկված հինգ թագավորները գահակալել են մինչև հաշվով մոտ 20 տարի, ինչը համապատասխանում է Վանի հարստության նախորդ թագավորների գահակալման միջին տևողությանը՝ 21,5 տարի:

Կրկին դիմենք Խորենացու «Հայոց պատմությանը»:

Տարբեր հեղինակներ թագմիցս փորձել են այլ աղբյուրների տվյալների հետ համապատասխանեցնել Պատմահոր նկարագրած անձանց և իրադարձությունները: Օրինակ, Ի. Դյակունովը, Մ. Կառավայանը, Գ. Դավանցյանը հունական աղբյուրների Պրոտոթեոսին և արքայական Պարտասային՝ սկյութական Աքսեանց պետության առաջնորդին, նույնացնում են Պարույր Սկայարդուն հետ:

Ռ. Իշխանյանը Արարատյան Արամիին նույնացնում է «Հայոց պատմության» Արամին, Երեմենային՝ Պարտիլին, Ռուշա Գ-ին՝ Պարույրի որդի Հրաշային (Հռնե): Գ. Սարկիսյանը Սարդուրի Դ-ին, Էրիմենային, Ռուշա Գ-ին, Ռուշա Դ-ին նույնացնում է համապատասխանաբար





Պրոտորինե-Պարոտարայի ու Պարույրի
նույնացումը հենվում է դրանց անունների ա-
րտաբն ճանաչության և հորենացու այն հաղորդ-
ման վրա, թե Պարույրի հայտնի Այաթորդին Ե-
ղև է Մենեքերիմի ժամանակակիցը և թելուհե-
լ է Երա հայրասանը որդիների, իսկ Պարույրը
կոչվել է Մարդաբանների դեմ Մարաստանի
Վարքակես թագավորի կողմից, փոխարենը
Երանից ճանաչվելով թագավոր: Սակայն այդ
նույնացումը մերժող փաստաթղթերը, կարծում
ենք, զերպաղտում են: Պրոտորինե-Պարոտ-
արայն սկզբնական առաջնորդ է, մինչդեռ Պար-
ույրը՝ հայ թագավոր, այն էլ, ինչպես շեշտում
է հորենացին, մեզ «արյունակից, ինկանս հա-
րազատ, քնից պակասկան»: Ըստ հորենացու,
Վարքակեսը թագավորն է Պարույրին, մինչ-
դեռ սակերի հզոր պետության առաջնորդ Պար-
ոտարան ավելի թույլ Մարաստանի թագավո-
րից թագադրվելու կարգի շնորհ: Ապարհազո-
ցը 673 թ. իրոք կոչվել է անդրեների դեմ, սա-
կայն այն կոչվել, որի մասին խոսում է հորենա-
ցին, ավարտվել է Ատրեստանի կործանումով:
Տարած հարցմանակ է ոչ թե լոկ պատերազմի
մասնակցելու համար է Վարքակեսը Պարույրին
ճանաչել թագավոր: Բայց Ատրեստանի վերջի-
ն թագավորը ոչ թե Ապարհազոցն էր, այլ Աշուր-
բայխուղ (հորենացին Ատրեստանի վերջին թա-
գավոր է համարում Մարդաբանավիճ), և Երա
վերջին կոչվելը տեղի ունեցան մե 60-70 տա-
րի առջ:

Այաթորդին՝ Պարույրի հայրը կամ պարզա-
պես հայտնողը, ըստ հորենացու, նույնպես
սկզբներից հետ կապ չույժ: Իսկ Մենեքերիմի
հայրաստան որդիներից նա քնակցեցել է «Ատ-
րեստանի սամանների մոտ, մեր աշխարհի
արևմտյան հարավում», Սիմ լուսան շքբանում:
Տարբերակ էլ որ մի պետության առաջնորդը
որևէ մեկին քաղաքական ապաստան է տալիս
մեկ այլ պետության տարածքում:

Վերջպես Պրոտորինեի որդի Մադիեսը, ո-
րը, ըստ Հերոդոտի, շախմատիով Ատրեստանի
Նիվիե մայրաքաղաքը պաշարած մարտվան
գորքը՝ արմենեսն 28 տարի իշխեց ամբողջ Ա-
սիայում, բոլորովին ճմառ չէ Պարույրի որդի
Հրատյային (Հուշե): Նստի՝ կրկին հայ շինելու
պատկանավ, և ապա՝ Երանց վերագրված տար-
քի գործերի: Երե մի թագավորը թեկուզ 28
տարով տիրացած լինեք ամբողջ Ասիային, դա
չէր վրիպել հորենացուց և չէր մուսցվի մեր ազ-
գի կողմից, մինչդեռ հորենացին միայն ճշտում է,
որ Հրատյան ապրել է Նսարագոյնուտի օրոք և
Երանից խնդրել է զերված երթալեցիների գլխա-
վորներից մեկին՝ Շամբատ անունով, որից և սեր-
վել է Բարգատունիների ցեղը:

Ճիշտ է, Երա անվան մասին Պատմամայրը
գրում է, որ նա «Հրատյան է կոչվում առավելա-
պես պայծառ երես և բոցավառ աչքեր ունենա-
լու համար», ուստի թվում է, որ նա կարող էր ու-
նենալ և այլ (ցանկացած) անուն, սակայն մեքն
շուտով կոխանենք, որ Հրատյան անունը պատա-

հանում չէ, և այդ անունով թագավոր իրական-
ում եղել է:

Գ. Սարկիսյանի տարբերակը հայտնորդից հա-
վաստի է թվում: Երևու շարքում էլ հայ թագա-
վորներ են (Արարատյան հաստատության թագա-
վորներին նա անվանում է «արմեն» և ոչ թե
«հայ», բայց տվյալ դեպքում դա էական չէ) և
ապրել են մտավորապես նույն ժամանակ: Սա-
կայն հենց այդպիսի նույնացումը որոշ չափով
կամայական է: Սարկիսյանի կարծես թե միակ
կանխան այն է, որ Տիգրանից հետո Հայկական
պետությունը որոշ անկում է ապրում: Նույնը
Արարատյան թագավորությունը Ռուշա Գ-ից
հետո: Սակայն մենք շփոխենք՝ արդյոք Ռուշա
Գ-ն անկումից առաջ վերջինն է եղել: Չի կարե-
լի բացատրել ևս մեկ թագավորի՝ Ռուշա Գ-ի որ-
դու գոյության հնարավորությունը: Արարատյան
գիրք այս դարձրած նույնպես անկում է ապ-
րում, և զրավոր Ելուրեց իխտա սուղ են: Օրի-
նակ, Երիզնեայի անունից գրված միայն մեկ
արդյունակ է մեզ հասել, և դժվար է ասել, թե
նու է հաջորդել նա: Ռուշա Գ-ից վերադարձող
միայն երկու արդյունակ է հասել: Այնպես որ,
վերջինիս ժամանակորի գոյությունը այնքան էլ
անհավանական չէ: Բայց այդ դեպքում խախտ-
վում է Սարկիսյանի ամբողջ համակարգը:

Մի տարբերակը մշակելիս ձգտել ենք, որ
այն առավելագույն չափով բավարարի բոլոր
արդյունների տվյալներին:

Սկսենք Արարատյան թագավորության մեզ
հայտնի առաջին թագավորին՝ Արամին (Արա-
մու, Արամում), որի անունը հիշատակում է Ատ-
րեստանի թագավոր Սալմանասար Գ-ն: Այս
«Արամեն» անունը այն ստիճանն է ճմառ հորե-
նացու Հայկան «Արամին» անվանը, որ մեկ հա-
վանակապությանը Երանց կարելի է մեկնում
անձը համարել, ինչը և անում են ուսումնասի-
րողներից շատերը: Նրանց համբերվում են ճա-
մանակազարկված առումով, քանի որ ըստ
հորենացու՝ Արամը ապրել է «Նիմոսի» Ատ-
րեստանին և Նիմոսից տիրելուց քիչ տարի ա-
ռաջ»: Իսկ Նիմոսը կամ Երա հայտնաբեր Շամ-
շիազադ Ե-ն իրոք ապրել է Արամինից մոտ 10-
15 տարի հետո: Սակայն Արամի կառույցած գոր-
ծերը չեն համապատասխանում Արամի գործե-
րին: Արամին չէր պատերազմել ոչ մեղացիների
դեմ (ի դեմս ոմն Նյուքսթր Մադեայի), ոչ Փոքր
Ասիայի տարածքում, ոչ էլ կարող էր հարցած
լինել Ատրեստանին, այն ժամանակ Արամին
տերությունը շատ փոքր էր, նույնիսկ մինչև Երե-
րատ չէր հասնում, և նա հազիվ էր դիմադրում
Ատրեստանի ճնշմանը: Հետևապես և Երա թե-
լալից Մշակը չէր կարող կառուցել Մամաթ
քաղաքը: Արամին չէր կարող պարտված Նյու-
քսթր Մադեային զանից Արամվորի պարսից,
քանի որ այն դեռ կառուցված չէր, և դեռ պետի
կառուցվել էր մոտ 70 տարի հետո Արգիշտի Ա-
ի կողմից: Այս ժամանակավիպումներին մենք
դեռ կանգնադրաւոնաբ:

Արգիշտի Ա-ն իր հերթին ճմառվում է հորե-
նացու Արա Գ-ից: Այդ հանգամանքը
ճշտում է Ռ. Իշխանյանը ելեկելու երկու անուննե-





րի միտնք «Ար» արմատից և երկու դեմքերի ժամանակաբաժանակ մտնողությունը: Շամիրա- մի օրոք սարել է Արդիշի Ա-ի հայր Մենուս թագավորը: Պաշտպանելով այս վարկածը՝ մենք կարող ենք այն արմատիցը հրահավ, որ Արդիշի անվան երկրորդ մասը, «զիշ», որ էշխանյանը համարում է ամանը («զիշտ»), կարող է համընկնել «զիզիցիկ» բառի «զիզ» արմատին: Դրանից բացի այստեղ կարող է առկա լինել արքայական զԵ «ծից» արմատի իմաստավորությունը: Լամբանտը պատմական թՈՃ «ծից», որտեղից լաներեն սՐՈՃ- զիզիցկություն և ուստերեն քՐՈՃ - զիշ, տղեր: Ուշադրություն դարձրեք հաս Արդիշիտիում-Արենշ (Arges) քաղաքի անվանը: Վերջապես կարող է առկա լինել «զիշ» - «զիշ» - «տուգեղ» անցումը, բայց «զիշտ» = «զիշ» + «տ» = «տուգեշ» = «զիզիցիկ» - շքրումով:

Իձ վերաբերում է ժամանակագրությանը, ապա Շամիրանը և Արդիշի Ա-ն տեսականորեն կարող են ժամանակակից լինել: Այսպես, եթե Աղաղմեթարի 4-6 ծնված լինեք մոտ 825 թ., երբ Շամիրանը 16 տարեկան էր, ապա վերջինս Արդիշի Ա-ի զանակալման սկզբում կլինեք մոտ 56 տարեկան, տարիք, որում քստ Լուսյան կարող էր տեղի ունենալ Խորենացու նկարագրած դեպքերի համեմատելիս մի մասը:

Գիտարկված երկու օրինակները հուշում են, որ Խորենացու Հայկյան հարստության հաս այլ ներկայացուցիչներ և իրապարտություններ կարող են համապատասխանել իրական պատմական անձանց, դեպքերին մոտավորապես հույն ճշտությանը, այսինքն՝ թե՛ անունով, թե՛ ժամանակաշրջանով, թե՛ գործունեությանը:

Փոյժենք զանել այդ համապատասխանությունները:

Մենք արդեն նշեցինք, որ Հայկյան Արամի զործերը, որոնք շարադրել է Խորենացին, կարող էր կատարել շատ ավելի ուշ ասքած մի այլ թագավոր: Այն ժամանակ, երբ արդեն Արամվի-Արդիշիտիսինիլին կառուցված, և հայկական պետությունը՝ այնքան հզոր լինեք, որ հնարավոր դասակարգ հրա զորքի անորելիստայան արշավանքներն ու ընդվզումները Ասորեստանի դեմ, և հզորացած Մարաստանը լքորեն կարառնար հայկական պետության անկախությանը:

Կա՞ արդյոք Արարատյան թագավորների շարքում այնպիսի թեկնամու, որը թավարարեք այդ պայմաններին, և զուցի անունով էլ նմանվեք Արամին: Պազգվում է, որ կա:

Արարատյան թագավոր Ասորոթի Գ-ից հետո թագավորել է Էրիմեն անունով թագավոր: Այս անունը շատերը (Խ. Մեշլանինով, Ս. Էրիմյան, Գ. Տիպալան) կապում են «Արմենիա» բառի հետ «արմենացի» իմաստով: Մյուսները՝ Գ. Դյակոնով, Ն. Հարությունյան, դրան համաձայն չեն: Բայց անհերք է անտեսել այն, որ «Էրիմեն» անունը առնչվում է ժամանակակից «Արմեն» կամ Խորենացու «Արամ» անվան հետ:

Էրիմենայի ապամ տարեկերից Արարատյան թագավորները արդեն թագմիցս արշավել

էին Եվրասիացի այն կողմ, նվաճել այդ երկրներ և իրենց հայտնակցերին՝ հատկապես Ռուշա Ա-ի հարավային մի շարք երկրամասերի կորստից հետո: Վերջին անգամ Էրիմենայից ընդամենը 30 տարի առաջ Անդրեկիրատ էր արշավել Ռուշա Ա-ն: Այնպես որ, չի բացառվում հաս Էրիմենայի նման արշավանքների հնարավորությունը: Արդեն կար հզորացած Մարաստանը, կառուցված էր Արմավիրը: Կար և ինքը՝ Նյուքար Մահզար, սկյութների առաջնորդ Պարաստան-Պրոտոթիսի որդի, Աքսեմանի արքա Մադիկը: Միշտ է, Մադիկը սկսեք է և ոչ թե մեղացի, սակայն այդ ազգերը բավական մտտ են, և դժվար չէր շփոթել դրանց՝ առավել ևս, որ «Մահզան» բառացիորեն նշանակում է մեղացի, իսկ Մարաստանը իրոք լքորեն սպառնում էր Արարատյան թագավորությանը:

Իձպես արդեն նշեցինք, Մադիկը շախչալից Նիզվին պաշարած Մարաստանի զորքը և ապա 28 տարի իշխեց Ասիայում: Հերոդոտը գրում է, որ Մադիկին և սկյութական պետության մյուս մեծերն մեղացիները խաբուսյանք սպանեցին, ապա կրկն վերակենդան Նիզվին պաշարումը: Այս անգամ Ասորեստանի թագավորը (արդեն ոչ թե Սարգանապալը, այլ Աշուր-բակալը) զրկված իր հզոր դաշնակիցի (սակերցի դաշնակից էին Ասորեստանին այն ժամանակից սկսած, երբ Պրոտոթիս-Պարաստանը կնուսեք էր տարի Ասարիսաղոնի դստերը), չկարողանալով դիմադրություն ցույց տալ մարական զորքին՝ հանձնեց Նիզվին: Սա Ք.մ.ա. 612 թվական էր:

Արդյոք Արամ-Էրիմենան է սպանել Մահզան-Մադիկին, թե՛ ճիշտ է Հերոդոտի վարկածը ինչույսի ժամանակ նրա մարտիցներից սպանվելու մասին: Մենք հակված ենք առայել ստորերբախել. Խորենացին գրում է, որ Մադիկը երկու տարի տիրեք Հայքին, հրա սպանությունը նշանակում էր երկրի ազատագրում, և զարմանալի չէ, որ այդ կարևոր իրադարձությունը մնացել է մոռոլորի, գոսանքների հիշողության մեջ: Իսկ Հերոդոտի տարբերակից զգացում է պաշտոնական Մարաստանի՝ սակերցի հաղթելու պատիվը իրեն վերագրելու միտումը:

Հերոդոտի պատմությունից կարելի է եզրակացնել, որ Մադիկի սպանության հույն տարին մտերեք զրավիցին Նիզվին: Հետևապես կարելի է ենթադրել, որ հույն թվին էլ Էրիմեն-Արամը տիրեք Արարատյան զանին: Դրանից առաջ երկու տարի Հայքն առաջատարում էին բարբարոս սակերցի, և ոչ մի իշխանության մասին խոսք չի եղել չէր կարող: Դա նշանակում էր, որ մոտ Ք.մ.ա. 614 թվականը հասնող՝ Ասորոթի Գ-ի զանակալման վերջին տարին էր. հա հավանաբար սպանվեք էր սակերի դեմ պատերազմում: Արդյոք նա Էրիմենայի հայրն էր, դժվար է ասել, այդ հարցին մենք դեռ կանգարադառնանք:

* Առաջին զրքի ԺԳ գլխում Խորենացին նշում է, որ Արամի զորեքի մասին տեղեկությունները, քստ Մար Աքա Աստիանի, հավաստի չեն, այլ քաղված են գոսանական եղբերից:





Իսկ այժմ կրկին դիմենք հորենացու «Հայոց պատմությանը»: Պատմությանը առանձին խոսում է Մարաստանի թագավոր Վարթակեսի կողմից Նիճվեի գրավման ժամին (Հեղոդոտը դա վերագրում է Մարաստանի ճակատվերին թագավոր Կիսարային): Այստեղ է, որ հա խոսում է հայոց առաջին իսկական, մեզ արյունակեց թագավոր Պարտիան մասին, որի ճակտորդն էր Սկայրդից: Վարթակեսը առաջարկում է Պարտիան մասնացնել Ասորեստանի դեմ պատերազմի, որի համար Երան թագ է խոստանում: Նիճվեի գրավման տարին, ինչպես տեսանք, հայոց զան էր բարձրագույն էրիմենա-Արամը, հետևապես սրանք ճույն անձն են: Ահա և Արամի ու ասորեստանցի Բարշամի պատերազմի պատմության աղբյուրը:

Այսպիսով, հորենացու երկում միեմույն հայ թագավոր էրիմենա-Արամի պատմությունը բաժանվել է 2 մասի, մի մասով տեղեկելով Պարտիայի կերպարը, մյուսով՝ միանյութելով Արամի կերպարին:

Որքանով է առույգ այս վարվածը: Էրիմենայի որդին և հաջորդը Ռուշա Գ-ն է: Պարտիայի որդին և հաջորդը Հրաշյան է: Երե մեր վարվածը ճիշտ է, ապա Ռուշա Գ-ն և Հրաշյան ճույն անձն են: Եվ իսկապես դժվար չէ հկասել, որ «Հրաշյա-ն և «Ռուշա-ն» միեմույն անուն են, «Հրաշյա-ն» դուրս է բերվում «Ռուշա-յից, «Ռուշա»-«Հողշա»-«Հրաշյա»-«Հրաշյա»: Ամենայն հավանականությամբ՝ սա ժողովրդական վերաստուգարանությունն արդյունք է և ծագում-ճարտանական կապ չունի «Ռուշա-յից» հետ: Մեր կարծիքով, առկա է արդեն ոչ թե զուգահե-րությունների շարք, այլ՝ օրինաչափություն, և մենք կարող ենք արձանագրել նա մեկ ճույնացում. Ռուշա Գ-Հրաշյա: Ռուշա Գ-Հրաշյայի գաճակայման սկիզբը ճշգրիտ դժվար է ասել, սակայն հորենացու այն հաղորդումից, թե Հրաշյան Նարեզդոցոսորդի խնդրել է Նրուստաղեմում (այսինքն՝ Ք.ժ.ա. 597) գերված եբրայեցիների գլխավորներից մեկին՝ Շամբատ անունով, կարելի է ձգարկացնել, որ այդ թվին հա արդեն թագավոր էր: Մյուս կողմից Ք.ժ.ա. 605 թ. Մարաստանը գրավեց Աշուրբակտի վերին ամրոցը՝ կարգեմիշը, և այդ արշավին ճույնպես սկիտ որ մասնացնում լինեք Հայոց գործը: Երե դա լինեք Հրաշյայի օրոք, կարծում ենք, այդ փաստը հորենացին կհաղորդեց: Ամենայն հավանականությամբ դա եղել է դեռ Պարտիայի օրոք: Հետևապես, նրա զանակայման վերջը, Հրաշյայի՝ սկիզբը, զանվում է Ք.ժ.ա. 605-597 թթ. միջև, բավական մեծ ճշգրտությամբ, երե հիշենք, որ այս թագավորների զանակայման տարիների և առավելապես զործերի մասին առհասարակ ոչինչ հայտնի չէր:

Ո՞վ է եղել Ռուշա Գ-Հրաշյայի հաջորդը, դժվար է ասել: հորենացին մինչև Երվանդ Ա

Մակավակացը բերում է և նրա թագավորների անունները, սակայն մենք հավանական ենք համարում, որ այդ անունները գուսանների երես-կալություն արդյունք են կամ որևէ կերպ հան-ընկերում են արդեն հայտնի անուններին: Դրանք քաջի, Երան համար տեղ չի չն մնում. ոչ ակ-վելին, քան 20-25 տարի. յուրաքանչյուրին հաս-նում է միջին հաշվով 5-6 տարի, մինչև դեռ Երանը ըստ հորենացու իրար հաջորդող հայերն ու որդիներն են:

Այս դեպքում «Երվանդի հայրը» դառնում է Ռուշա Գ-Հրաշյան, իսկ ինքը՝ Երվանդ Ա Մակավակացը, ճույնանում է Ռուշա Գ-ին:

Տիգրանի, անկասկա Արարատի վերջին թագա-վորի սեպագիր անունը, այսպիսով, մեզ հայտնի չէ: Կամ գայից հնագիտական գլուխոքը կհա-ղորդեն, կամ էլ այն երբեք չի գրվել, այդ տա-րիներին սեպագիրն ընդմիջու դուրս էր եկել գոր-ծածությունից:

Մենք է և նա մեկ խնդիր: Ո՞վ էր Սկայրդից՝ Պարտիայի ճակտորդ, որը ապաստան էր տվել Սենեքերիսի հայրասպան որդիներին: Հնարա-վոր են տարբերակներ: Գուցե դա Սարգոսի Գ-ն է (Պարտիայի հայրը, թե ոչ՝ Էսախ է: Եվ արդյոք պատմական է Սարգոսի - Արարտի անունների որոշ նմանությունը, և զգուց դեռ կզանգվեն սեպագրեր Սարգոսի որդի էրիմենա-յի անունով), իսկ Սենեքերիսի որդիներին ապաստան է տվել մեկ այլ անձ. գրեց Ռուշա Բ-ն: Բայց տեսականորեն հնարավոր է և այն տարբերակը, որ նա Պարտիայի հայրն է և իսկա-պես ընդունել է Սենեքերիսի զանակներին: Այս դեպքում նա կամ կապ չունի Վալին հարստու-թյան հետ, կամ էլ Արգիշտի Բ-ի կրտսեր որդիներից է: Մճվել է Ք.ժ.ա. 710 թ. շրջանում, 680 թ., մոտ 30 տարեկան հասակում ընդունել է հայ-րասպաններին, 670 թ. շրջանում, մոտ 40 տարե-կանում ծնվել է Երա որդի Պարտից: Գան բարձրագույն պահին, Ք.ժ.ա. 612 թ., նա եղել է մոտ 60 տարեկան և մահացել է 600 թ. շրջա-նում մոտ 70 տարեկան հասակում: Այս տարբե-րակը հավանական է, քանի որ լիովին համա-պատասխանում է հորենացու շարադրած փաս-տերին և հոգեբանորեն բացատրում է և՛ այն, որ հորենացին Պարտիայի դիտում է կարծես Երա ճյուղի, ըստ հայկական հաբաստության՝ Եր-վանդյան (գուտ չեխանյանի) հինճաղի, և՛ այն, որ Պարտիայից սկսած՝ Արարատի արտուրինքը բա-ղասակամությունը կրեց յուրը փոփոխությունը, ա-տուրական կողմնորոշումը, որ գրեթե թերև էր անկախության կորստի, փոխարինվեց մարավան կողմնորոշմամբ, ինչը կարևորան, քայք քայքա-քայքան հաջորդություններ տվեց. Արարատյան թագավորությունը վերանվանեց դեռ Ռուշա Ա-ի օրոք կորցրած հարավային հողերը, բարձ-րացրեց իր հեղինակությունը: Ինչ վերաբերում է Մարաստանին, ապա նա Ք.ժ.ա. 590-585 թթ. հնճգիտու կարող էր պատերազմել Լիդիայի հետ. նրա թիկնորում արդեն ոչ թե իշխանա-կան, այլ դաշնակից Արարատյան թագավորու-թյունն էր:

* «Ռուշա» անունը հավանաբար ճշանակում է «արքա», ինչպես նաև պարթևական Արշակ և ասանկերի Ռաշա անունները: Բարձր էլ անճշտում են սրբ քառի հետ: